



ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստան, 0025, Երևան, Ալեք Մանուկյան փող., 5 շենք,
Հեռ. (+374)10570830, (+374)10554057 էլ.հասցե hasarakakan.kartsiq@gmail.com

**Հանրային հեռուստաընկերության բովանդակային
ուսումնասիրությունն ըստ նպատակային ուղղությունների**

Երևան 2018

Բովանդակություն

Հետազոտության նպատակի և մեթոդաբանության նկարագրություն	3
Առաջին ալիքի եթերացանկի վերլուծություն.....	4
Եզրակացություններ և առաջարկներ	16

Հետազոտության նպատակի և մեթոդաբանության նկարագրություն

«Հանրային հեռուստաընկերության բովանդակային ուսումնասիրությունն ըստ նպատակային ուղղությունների» հետազոտությունը միտված է ուսումնասիրելու Առաջին ալիքի եթերացանկի բովանդակային համապատասխանությունը Հանրային հեռուստաընկերության առջև դրված հիմնական ռազմավարական ուղղություններին, որոնք առկա են Հանրային հեռուստառադիոընկերության վերաբերյալ օրենքում: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել է Առաջին ալիքի եթերացանկը, եթերացանկում ընդգրկված հեռուստանախագծերի բովանդակությունը, տևողությունը: Արդյունքում հաղորդումները տեսակավորվել են, ինչը հնարավորություն է տվել հասականալ, թե ինչ տեսակի հաղորդումներ կան Առաջին ալիքի եթերացանկում, եթերաժամի որ մասն է կազմում այս կամ այն տեսակի հաղորդումը, որքանով է դա նպատակային, որքանով է ճիշտ ընտրված ցուցադրման ժամը և այլն: ՀՀ օրենքում Հանրային հեռուստառադիոընկերության վերաբերյալ առկա դրույթների ուսումնասիրությունից հետո բովանդակային վերլուծության է ենթարկվել Առաջին ալիքի եթերացանկն ու եթերացանկի հաղորդումները:

Հետազոտության ընթացքում կիրառվել է բովանդակային վերլուծության մեթոդը, որն իրենից ենթադրում է քանակական և որակական մեթոդների համադրում և թույլ է տալիս արդյունքում դուրս բերել ոչ միայն թվային տվյալներ, այլև կատարել բովանդակային վերլուծություն: Ելնելով հետազոտության առջև դրված նպատակից և խնդիրներից բովանդակային վերլուծությունն ամենադիպուկն է:

Բովանդակային վերլուծության են ենթարկվել Առաջին ալիքի նոր եթերաշրջանի¹ մինչև 2018թ. փետրվարի 18-ն ընկած ժամանակահատվածի բոլոր հաղորդումները:

¹Նոր եթերաշրջանը սկսվել է 2017 թ. սեպտեմբերից

Առաջին ալիքի եթերացանկի բովանդակային վերլուծություն

«Հանրային հեռուստաընկերության բովանդակային ուսումնասիրությունը ստանալու նպատակային ուղղությունների» հետազոտության ընթացքում իրականացված Առաջին ալիքի եթերի բովանդակային վերլուծության արդյունքները համադրվել են Հանրային հեռուստառադիոընկերության մասին Հայաստանի օրենքում առկա դրույթների հետ: Ստորև ներկայացված են այդ դրույթներն ու դրանց համապատասխան իրականացված ուսումնասիրության արդյունքները:

1. Հանրային հեռուստառադիոընկերության վերաբերյալ օրենքում առկա կետերի *համաձայն Հանրային հեռուստաընկերության օրվա եթերաժամի առնվազն երկու երրորդը (եթե վերածում ենք տոկոսի, ապա 66.6%-ը) պետք է հատկացնել հայրենական արտադրության հաղորդումներին:*² Եթերացանկի բովանդակային վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ Առաջին ալիքով ցուցադրվող ոչ հայկական արտադրության հեռուստանախագծերից են գեղարվեստական ֆիլմերը, մեկ հեռուստասերիալ և մուլտֆիլմերը, որոնք շաբաթվա կտրվածքով կազմում են ընդհանուր եթերաժամի համապատասխանաբար 21.9% (*Գծապատկեր 2*), 4.9% և 3.1% (*Գծապատկեր 1*): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գեղարվեստական ֆիլմերը, հեռուստասերիալն ու մուլտֆիլմերը միակ ոչ հայկական արտադրության հեռուստանախագծերն են, կարող ենք ասել, որ ոչ հայկական արտադրության հեռուստանախագծերը զբաղեցնում են ընդհանուր եթերաժամի 29.9%-ը, իսկ մնացած 70.1%-ը նվիրված է հայկական արտադրության հաղորդումներին:
2. Հանրային հեռուստառադիոընկերությանը վերաբերող օրենքի հաջորդ կետը նշում է, որ *Հանրային հեռուստաընկերությունը պետք է ապահովի հեռարձակվող հաղորդումների բազմազանությունը՝ հնարավոր հաղորդաշարերի և հաղորդումների տեսակների տեսքով:*³ Առաջին ալիքի եթերացանկում առկա հաղորդումների բովանդակային վերլուծությունը թույլ է տվել առկա հաղորդումները տեսակավորել և հասկանալ ցուցադրվող հաղորդումների բազմազանությունը, ինչպես նաև պարզել, թե յուրաքանչյուր տեսակի հաղորդում ընդհանուր եթերաժամի որ մասն է կազմում

² <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1464> (Հոդված 28ա)

³ <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1464> (Հոդված 28բ)


մեկ շաբաթվա կտրվածքով: Հաղորդումների տեսակավորման արդյունքները ցույց են տալիս, որ Առաջին ալիքն ապահովում է հաղորդումների տեսակների բազմազանությունը՝ իր եթերացանկում ներառելով ն՛ ժամանցային, ն՛ տեղեկատվական, ն՛ մշակութային, ն՛ հանրային խնդիրները բարձրաձայնող, ն՛ ուսուցողական, ն՛ ռազմահայրենասիրական, ն՛ կրոնական և մի շարք այլ հաղորդումներ (*Գծապատկեր 1*): Նշված հաղորդումների համամասնությունը եթերաժամում տարբեր է: Առաջին ալիքի եթերացանկի մեջ առկա հաղորդումների բովանդակային վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ ընդհանուր առմամբ եթերում ժամանակի տրամադրման տեսանկյունից գերակշռող են ժամանցային հաղորդումները, որոնք շաբաթվա կտրվածքով կազմում են ընդհանուրի 44,2%-ը (*Գծապատկեր 1*): Ժամանցային հաղորդումները բաղկացած են գեղարվեստական ֆիլմերից (21.9%), հեռուստասերիալներից (10.7%) և մի շարք հաղորդումներից (11.6%) (*Գծապատկեր 2*): Գեղարվեստական ֆիլմերը ժամանցային հաղորդումների գերակշիռ մասն են կազմում:

Եթերաժամի տեսանկյունից երկրորդ տեղում են տեղեկատվական/լրատվական հաղորդումները, որոնք կազմում են ընդհանուր եթերաժամի 8.6%-ը: Երրորդ տեղում գտնվում են երաժշտական հաղորդումները (7.4%), որոնք, ըստ էության, նույնպես կարելի է համարել ժամանցային, սակայն, ելնելով հասարակության նախընտրություններից և պահանջներից՝ նպատակահարմար է երաժշտական հաղորդումները տարանջատել ընդհանուր ժամանցային հաղորդումներից: Չորրորդ տեղում գտնվում են հանրային խնդիրներ բարձրաձայնող և քննարկող հաղորդումները, որոնք զբաղեցնում են ընդհանուր եթերաժամի 6.9%-ը:


Գծապատկեր 1-ում պատկերված տվյալների համաձայն կարող ենք ասել, որ ընդհանուր առմամբ եթերաժամում տարբեր տեսակի հաղորդումների զբաղեցրած տոկոսային համամասնությունը միմյանցից կտրուկ չեն տարբերվում. բացառություն են կազմում ժամանցային հաղորդումները: Մինևնույն ժամանակ, կարող ենք ասել, որ մշակութային և երեխաների համար նախատեսված ժամանցային հաղորդումները փոքր տոկոս են զբաղեցնում ընդհանուր Առաջին ալիքի եթերացանկի մեջ՝ համապատասխանաբար 2.7% և 3.1%: Ստացվում է, որ ընդհանուր ժամանցային

հաղորդումները շատ են ցուցադրվում և ունեն մեծ տոկոս, սակայն երեխաներին ուղղված ժամանցային հաղորդումների թիվը փոքր է:

Գծապատկեր 1. (%)⁴



Գծապատկեր 2. (%)⁵




⁴ Տվյալները դուրս են բերված սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների եթերացանկի հիման վրա

⁵ Տվյալները դուրս են բերված սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների եթերացանկի հիման վրա

Գծապատկեր 3-ի վրա պատկերված են հաղորդումների տեսակների բաշխվածությունն ըստ աշխատանքային և հանգստյան օրերի: Ժամանցային հաղորդումները գերակշռող են երկու դեպքում էլ, սակայն հանգստյան օրերին (35.1%) առավել քիչ են ցուցադրվում, քան աշխատանքային օրերին (48%): Փոխարենը հանգստյան օրերին աշխատանքային օրերի հետ համեմատած առավել շատ են ցուցադրվում երաժշտական, ուսուցողական, ռազմահայրենասիրական, մշակութային, ճանաչողական հաղորդումները: Աշխատանքային օրերին, հանգստյան օրերի հետ համեմատած, առավել շատ են ցուցադրվում հանրային խնդիրներ բարձրաձայնող, ինչպես նաև բարոյախրատական հաղորդումները:⁶

Տեղեկատվական հաղորդումների համամասնությունն ընդհանուր եթերացանկում աշխատանքային և հանգստյան օրերին գրեթե չի փոխվում:

Գծապատկեր 3. (%)



3. Հայաստանի օրենքում Հանրային հեռուստառադիոընկերությանը վերաբերող հատվածում նշվում է Հանրային հեռուստառնկերության ստեղծման հիմնական նպատակը, որն ունի հետևյալ ձևակերպումը. «սպահովել քաղաքացիների

⁶ Բարոյախրատական հաղորդումներ ասելով՝ այս պարագայում նկատի ունենք կարճատև ֆիլմերի շարք, որից յուրաքանչյուրը բարձրաձայնում է մի խնդրահարույց իրավիճակ, որը ֆիլմից հետո մեկնաբանում է հոգեբանը:

*սահմանադրական իրավունքը, այսինքն՝ ազատորեն ստանալ քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտալուսավորչական, հայոց լեզվի եւ պատմության, մարզական, զվարճալի եւ հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվություն»*⁷: Առաջին ալիքի բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ եթերացանկի մեջ առկա են քաղաքական, մշակութային, մանկապատանեկան, գիտալուսավորչական, հայոց լեզվին, պատմությանը անդրադարձող, ինչպես նաև հանրության համար նշանակալի տեղեկատվություն պարունակող հաղորդումներ: Եթերաժամում այս հաղորդումների զբաղեցրած տոկոսը տարբեր է: Ինչպես արդեն նշվեց, մշակութային և մանկապատանեկան հաղորդումները Առաջին ալիքի եթերաժամի փոքր տոկոսն են կազմում: Մանկապատանեկան հաղորդումներին անդրադառնալով՝ պետք է նշել, որ երեխաների համար նախատեսված ժամանցային հաղորդումների բազմազանությունն ապահովված չէ. իբրև ժամանցային հաղորդում օրվա կտրվածքով մեկ անգամ ցուցադրվում է որևէ մուլտֆիլմ և մեկ մուլտսերիալ: Ինչ վերաբերում է պատանիներին, ապա Առաջին ալիքի եթերացանկում վերջիններիս հստակ ուղղված ժամանցային հաղորդումներ չկան: Պատանիների և երիտասարդների համար ժամանցային հաղորդումների բացակայության հետևանքով է, որ երիտասարդների կողմից Առաջին ալիքը որակավորվում է իբրև «մեծահասակների» հեռուստաալիք:⁸

Հանրային հեռուստաընկերության ձևավորման հիմնական նպատակի մեջ մտնում է նաև հայոց լեզվի և պատմության վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը հանրությանը: Այս նպատակի իրագործման համար հարկավոր են նպատակային հաղորդումներ: Առաջին ալիքի հաղորդումների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ այս հեռուստաալիքի եթերացանկում այդպիսի հաղորդումներ չկան: Մարզական նորությունների մասին հանրության տեղեկացվածությունն

⁷ <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1464> (Հոդված 28)

⁸ Դուրս է բերվել «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն»-ի կողմից 2017 թ. իրականացված «Առաջին ալիքի կերպարի դուրսբերումը երիտասարդների շրջանում» հետազոտության արդյունքում:


ապահովվում է լրահոսում մարզական անցուդարձին՝ անդրադարձ կատարելով, ինչպես նաև կարևոր առաջնությունները ցուցադրելով:

Առաջին ալիքի հաղորդումների բովանդակային վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ հանրության համար կարևոր և նշանակալից տեղեկատվության տրամադրումն իրականացվում է տարբեր տեղեկատվական հաղորդումների շրջանակներում:

4. Հանրային հեռուստաընկերության վերաբերյալ հաջորդ կետը հետևյալն է. *«հասարակական առավել հնչեղություն ունեցող տեղեկատվության հեռարձակման համար օգտագործել ամենահարմար եթերային ժամանակը՝ ներկայացնելով խնդրի կամ հարցի վերաբերյալ կարծիքների բազմազանությունը»⁹* Սա նշանակում է, որ հաղորդումների թողարկման ժամերի ընտրությունը պետք է լինի նպատակաուղղված՝ հաշվի առնելով թիրախային լսարանի յուրահատկությունները: Այս տեսանկյունից նպատակահարմար է հասկանալ, թե մարդիկ որ ժամերին են առավել շատ դիտում Առաջին ալիքը: «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի» կողմից իրականացված հետազոտության արդյունքում դուրս բերված տվյալները թույլ են տալիս ասել, որ հասարակության մեծ մասը Առաջին ալիքը դիտում է 18:00-21:00 (աշխատանքային օրերին՝ 55.4%-ը, հանգստյան օրերին՝ 50.6%-ը) և 21:00-00:00 (աշխատանքային օրերին՝ 52%-ը, հանգստյան օրերին՝ 49.3%-ը) ընկած ժամանակահատվածում (*Գծապատկեր 4*): Սա նշանակում է, որ հասարակական առավել մեծ հնչեղություն ունեցող տեղեկատվության հեռարձակումը նպատակահարմար է իրականացնել 18:00-00:00 ընկած ժամանակահատվածում: Այս տեսանկյունից կարևոր է հասկանալ, թե որ հաղորդումներն են տեղ գտնում Առաջին ալիքի եթերացանկում այս ժամերին: Ուսումնասիրելով եթերացանկը՝ կարող ենք նկատել, որ 18:00-00:00 հատվածում ցուցադրվում են ժամանցային, տեղեկատվական և հանրային կարևորություն ունեցող խնդիրները բարձրաձայնող հաղորդումները: Հանրային խնդիրների բարձրաձայնմանն ուղղված մեկ հաղորդում է ցուցադրվում՝ 30 րոպե տևողությամբ:

⁹ <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1464> (Հոդված 28q(1))

Գծապատկեր 4. (%)



Առաջին ալիքով ցուցադրվող հանրային խնդիրներ բարձրաձայնող հաղորդումների շարքին են դասվում «Առաջին տաղավար», «Եկեք հասկանանք», «Եթե բոլորը», «Մասնագիտությամբ լրագրող» և «Օրակարգից դուրս» հաղորդաշարերը: Ըստ էության, Առաջին ալիքն ունի հինգ հեռուստանախագիծ, որոնք իրենց բնույթով և հաղորդման առջև դրված նպատակից կոչված են բարձրաձայնելու այս կամ այն հանրային խնդիրը:

«Առաջին տաղավար» հաղորդման սահմանած նպատակի համաձայն հեռուստանախագծի դիտակետում մարդն է՝ իր հոգեբանական և իրավական խնդիրներով: Հաղորդման աշխատանքային թիմը տաղավար է հրավիրում մարդկանց, որոնք գտնվում են բարդ իրավիճակում և ունեն օգնության կարիք: Այս հեռուստանախագծի բովանդակային վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ հաղորդման ձևաչափն ունի հստակեցման և լրացման կարիք: Ըստ էության, հաղորդումն իրականացնում է իր առջև դրված գործառույթների միայն մի շարքը՝ լուսբանում է խնդիրը, լսում, քննարկում և կարեկցում է դժվար իրավիճակում հայտնված մարդկանց, սակայն վերջնական լուծում չի տրվում: Հաղորդումն առավել կշահեր և կլիներ օգտակար օգնության կարիք ունեցող մարդկանց համար, եթե իրականացներ խնդրի ոչ միայն քննարկման, այլև հստակ լուծման գործառույթ:

«Եկեք հասկանանք» հաղորդման նպատակն է քննարկել և հասկանալ ընտանեկան խնդիրների, վեճերի, բարդ հարաբերությունների առջև կանգնած մարդկանց պատմությունները: Ըստ էության, հաղորդումն ունի նպատակ բարձրաձայնելու, քննարկելու և լսելու տարբեր կարծիքներ ստեղծված իրավիճակի վերաբերյալ, սակայն լուծումներ փնտրելը, գտնելն ու ստեղծված իրավիճակը կարգավորելը չեն հանդիսանում այս հեռուստանախագծի գործառույթի մաս: Ինչպես «Առաջին տաղավար» հաղորդման դեպքում, այս պարագայում ևս հաղորդումն առավել հանրօգուտ կլինի, եթե իր ձևաչափի մեջ ներառի նաև քննարկվող խնդիրներին պարտադիր լուծումներ տալու մոտեցումը: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ «Եկեք հասկանանք» հաղորդման շրջանակներում անդրադարձ է կատարվում առավել անձնային և ոչ թե հանրային կարևորություն ունեցող խնդիրներին:

«Օրակարգից դուրս» հաղորդումը միտված է քննարկելու հասարակության մեջ առկա ամենահրատապ խնդիրները տարբեր պաշտոնյաների, երկրի օրակարգը թելադրող անհատների, արվեստագետների, քաղաքական գործիչների հետ: Հաղորդման ընթացքում քննարկվում են երկրի առջև ծառայած ամենակարևոր խնդիրները տվյալ բնագավառի փորձագետի հետ, ինչը թույլ է տալիս լսել ոլորտին քաջատեղյակ մարդկանց կարծիքները: Հանրային խնդիրների բարձրաձայնման տեսանկյունից «Օրակարգից դուրս» հաղորդաշարն իրականացնում է իր գործառույթը, սակայն այստեղ կարող է լինել մտավախություն՝ կարծիքների բազմազանության ապահովման հետ կապված: Ըստ էության, հաղորդման հյուր հրավիրվում է այս կամ այն անհատը, ով համարվում է լավ իրազեկված քննարկվող խնդրի մասին, սակայն, այստեղ պետք է միշտ լինի այն մտավախությունը, որ հասարակությանը լսելի է դառնում միայն մեկ կարծիք, խնդիրը ներկայացվում է մի տեսանկյունից: Կարծիքների բազմազանության ապահովման տեսանկյունից հաղորդումն առավել կշահի, եթե ձևաչափի և ընթացակարգի մեջ իրականացվեն որոշ փոփոխություններ՝ քննարկմանը հրավիրելով երկու փորձագետ կամ ցուցաբերելով այլընտրանքային լուծումներ:

«Մասնագիտությունը՝ լրագրող» հաղորդաշարը¹⁰ վեր է հանում հասարակության և առանձին անհատների խնդիրները և վերջիններիս վերաբերյալ իրականացնում է հետաքննություններ, որոնք թույլ են տալիս դրանք հասկանալ և դիտարկել բազմակողմանի: Հասարակության խնդիրների բարձրաձայնման հատվածի մասին խոսելիս պետք է նշել, որ սովյալ հաղորդման շրջանակներում բարձրաձայնված խնդիրներն ու 2017 թ. «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն»-ի կողմից իրականացված հետազոտության արդյունքում դուրսբերած հանրային խնդիրները, որոնք առանձնացվել են տարբեր ոլորտների փորձագետների կողմից միմյանցից տարբերվում են: Փորձագետների կողմից առանձնացվում են առավել համակարգային խնդիրներ (ոչ լիարժեք ձևավորված տնտեսական համակարգը, քաղաքական ոլորտում պրոտեկցիայի առկայությունը, օրենսդրական դաշտի բացերը, կրթական համակարգի վակուումային վիճակը, իմիտացիոն հասարակական կազմակերպությունների առկայությունը, քաղաքաշինության հիմնահարցերը և այլն),¹¹ մինչդեռ հաղորդաշարի մեջ բարձրաձայնված խնդիրներն ունեն առավել առօրեական բնույթ:

Առաջին ալիքի եթերացանկի ուսումնասիրության արդյունքում տեսակավորված հաղորդումների մի մասն ունեն ընդհանուր բնույթ և ուղղված են հասարակությանը, իսկ կան հաղորդումներ, որոնք պահանջում են եթերաժամերի առավել նպատակային բաշխվածություն՝ թիրախավորված լսարանի առանձնահատկությունները հաշվի առնելով: Այս պարզայում կարևոր է հասկանալ, թե տարբեր տարիքային խմբեր որ ժամերին են հիմնականում դիտում Առաջին ալիքը: «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի» կողմից 2017թ.-ին իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս դուրսբերել ժամային բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի: *Գծապատկեր 5.1-ում և Գծապատկեր 5.2-ում* նշված են Առաջին ալիքի դիտելիության ժամերի բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի՝


¹⁰ Այս հաղորդաշարը փետրվարից այլևս չի ցուցադրվում, սակայան ներառված է վերլուծության մեջ, քանի որ կազմում է ուսումնասիրված եթերաշրջանի մաս:

¹¹ «Հանրային առաջնային խնդիրների և դրանց լուծման հնարավոր ուղիների դուրսբերում փորձագիտական հարցազրույցների միջոցով. վերջիններիս բարձրաձայնումը/ներկայացվածությունը Առաջին ալիքով», Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն, Երևան 2017


համապատասխանաբար աշխատանքային և հանգստյան օրերին: Այսպես, *Գծապատկեր 5.1-ի և 5.2-ի* վրա պատկերված տվյալների համաձայն կարող ենք ասել, որ առավոտյան 08:00-12:00 ընկած հատվածում Առաջին ալիքն ամենաշատը դիտում են 45-54 տարիքային խմբի մարդիկ (34.7% և 33.3%): 14-24 տարիքային խմբի ներկայացուցիչներն աշխատանքային օրերին ամենաքիչն են այս ժամերին դիտում Առաջին ալիքը (7.2%): Հանգստյան օրերին, սակայն, պատկերն այլ է. 14-24 տարիքային խմբի ներկայացուցիչների 18.6%-ը առավոտյան դիտում է Առաջին ալիքը: Սա պայմանավորված է այս խմբի ներկայացուցիչների զբաղվածությամբ. վերջիններիս մեծ մասը հիմնականում կա՛մ ուսանող է, կա՛մ աշակերտ:

Գծապատկերների վրա առկա տվյալներից դատելով՝ կարող ենք ասել, որ գիշերը 03:00-08:00 ընկած հատվածում Առաջին ալիք դիտողների թիվը մեծ չէ. կան տարիքային խմբեր, որոնք այդ ժամին բացարձակապես չեն դիտում Առաջին ալիքը: Այսպես, աշխատանքային օրերին 03:00-08:00 ընկած ժամանակահատվածում 25-34 և 45-54, իսկ հանգստյան օրերին՝ 25-34, 35-44 և 45-54 տարիքային խմբերի ներկայացուցիչները չեն դիտում Առաջին ալիքը: Այս տեսանկյունից կարևոր է Առաջին ալիքի վարած «կրկնության» ռազմավարությունը, ինչը նշանակում է, որ այդ ժամերին ցուցադրվում են արդեն իսկ մեկ անգամ եթերում ցուցադրված հաղորդումների կրկնությունները: Սա նշանակում է, որ այդ ժամերին չկա հաղորդում, որը կարող է դուրս մնալ որևէ տարիքային խմբի ուշադրությունից՝ պայմանավորված ցուցադրման ժամով:

Գծապատկեր 5.1. Աշխատանքային օրերին (%)



Գծապատկեր 5.2. Հանգստյան օրերին (%)



5. Օրենքում Հանրային հեռուստատադիտորնկերությանը վերաբերող կետերից մեկում ասվում է. «*հեռուստատադիտարանին մատուցել այնպիսի հաղորդաշարեր և հաղորդումների տեսակներ, որոնցում հաշվի են առնվում Հայաստանի տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը*»:¹² Առաջին ալիքով ցուցադրվող մի շարք հաղորդումների շրջանակներում («Հրապարակում», «Հայաստանի ճամփեքով», «Կյանքը սահմանին») իրականացվում է անդրադարձ Հայաստանի տարբեր տարածաշրջաններին, նշվում են տարբեր մարզերում, համայնքներում առկա ձեռքբերումները, տարբեր իրադարձությունները, ներկայացվում են համայնքի զարգացման հաջողված պատմությունները: Այս առումով տարբերվում է «Կյանքը սահմանին» հեռուստանախագիծը, որը ներկայացնում է սահմանամերձ համայնքներում բնակվող մարդկանց կյանքը: Հաղորդումների շարքը կառուցվում է մարդկանց սովորական ու առօրյա կյանքի մասին պատմությունների միջոցով: Առաջին ալիքի հաղորդումների բովանդակային վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ օրենքի այս կետի հետ կապված կան որոշ բացթողումներ: Այսպես, Առաջին ալիքի եթերացանկում չկա ազգային փոքրամասնություններին վերաբերող և վերջիններիս խնդիրները բարձրաձայնող հաղորդում: Առաջին ալիքի եթերացանկի

¹² <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1464> (Հոդված 28գ(2))

ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ հասարակության տարբեր շերտերի շահերը բարձրաձայնող հաղորդումների շարք Առաջին ալիքով նույնպես չի ցուցադրվում: Հասարակության տարբեր շերտերի խնդիրները բարձրաձայնվում են մի շարք հաղորդումների որոշ թողարկումների ընթացքում: Մասնավորապես, այս խնդիրները բարձրաձայնվում են լրատվական թողարկումների, հանրային խնդիրները բարձրաձայնող որոշ հաղորդումների ընթացքում: Հասարակության տարբեր խմբերի շահերի ներկայացմանն ու բարձրաձայնմանն ուղղված առանձին հաղորդում Առաջին ալիքի եթերացանկում չկա:

6. Հանրային հեռուստաընկերության վերաբերյալ օրենքում առկա կետերից մեկում գրված է, որ *Հանրային հեռուստաընկերությունը պետք է իր ծրագրերում ապահովի խուլուհամր հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիությունը*:¹³ Եթերացանկի բովանդակային ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Առաջին ալիքի ոչ բոլոր կարևոր և հանրային նշանակություն ունեցող հաղորդումներն են ապահովում խուլուհամր հանրության համար տեղեկատվության ստացման մատչելիությունը:

¹³ <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1464> (Հոդված 28դ)

Եզրակացություններ և առաջարկներ

Առաջին ալիքի եթերացանկի և հաղորդումների բովանդակային վերլուծությունն ըստ Հանրային հեռուստառադիոընկերության մասին օրենքում առկա դրույթների թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները՝

- Առաջին ալիքի եթերաժամի 70.1% նվիրված է հայկական արտադրության հաղորդումներին: Ոչ հայկական արտադրության հեռուստանախագծերից են գեղարվեստական ֆիլմերը (21.9%), հեռուստասերիալը (4.9%) և մուլտֆիլմերը (3.1%): Օրենքում Հանրային հեռուստառադիոընկերությանը վերաբերող հատվածում նշվում է, որ Հանրային հեռուստաընկերության օրվա եթերաժամի առնվազն երկու երրորդը, որը հավասար է 66.6%-ի, պետք է հատկացնել հայրենական արտադրության հաղորդումներին: Այս տեսանկյունից կարող ենք ասել, որ Առաջին ալիքն՝ իբրև հանրային հեռուստաընկերություն ապահովում է այս դրույթը:
- Առաջին ալիքի եթերային ժամանակի տեսանկյունից գերակշռում են ժամանցային հաղորդումները, որոնք զբաղեցնում են ընդհանուր եթերաժամի 44.2%-ը: Տեղեկատվական/լրատվական հաղորդումները երկրորդ ամենաշատ եթերաժամ զբաղող հաղորդումներն են, սակայն դրանց տոկոսը (8.6%) կտրուկ տարբերվում է ժամանցային հաղորդումների զբաղեցրած եթերաժամից: Հանրային խնդիրների բարձրաձայնմանն ու քննարկմանն ուղղված հաղորդումներն իրենց զբաղեցրած եթերաժամով գտնվում են չորրորդ տեղում և զբաղեցնում են ընդհանուր եթերաժամի 6.9%: Ամենաքիչ եթերաժամը նվիրված է կրոնական (1.1%), մշակութային (2%), բարոյախրատական (2.7%) և մանկական ժամանցային (3.1%) հաղորդումներին: Թերևս օրենքի դրույթներում չկա հստակ եթերաժամ, որը պետք է նվիրված լինի այս կամ այն տեսակի հաղորդմանը, այնուամենայնիվ պետք է նշել, որ Առաջին ալիքի եթերը կշահեր, եթե իր եթերացանկում ունենար մանկական ժամանցային մի շարք հաղորդումներ (ուսումնասիրված եթերաշրջանում իբրև մանկական ժամանցային հաղորդումներ հանդես են գալիս միայն մուլտֆիլմերն ու

մուլտսերիալները): Միննույն ժամանակ, պետք է նշել, որ օրենքի կետերից մեկում նշվում է, որ Հանրային հեռուստաընկերությունը պետք է ներառի մանկապատանեկան հաղորդումներ: Այս պարզապում պատանիներին նվիրված հաղորդումների հատվածում առկա են բացեր, քանի որ Առաջին ալիքի եթերացանկում չկան պատանիներին ուղղված ժամանցային հաղորդումներ և սա է այն հիմնական պատճառը, որ երիտասարդների կողմից Առաջին ալիքն ընկալվում է իբրև «մեծահասակների» հեռուստաալիք: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Առաջին ալիքը կշահի, եթե իր եթերացանկում ներառի պատանիներին և երիտասարդներին ուղղված ժամանցային հաղորդումներ, մասնավորապես, հետաքրքիր կլինի եթերացանկում ունենալ պատանիների առօրյան ներկայացնող հեռուստասերիալ: Վերջինս իր բնույթով կարող է լինել ոչ միայն ժամանցային, այլև ունենալ բարոյախրատական և պատանիների/երիտասարդների մեջ որոշակի արժեքներ սերմանող գործառույթ:

- Առաջին ալիքի եթերաժամի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մշակութային հաղորդումները կազմում են ընդհանուրի փոքր մասը (2%): Հաշվի առնելով Հանրային հեռուստաընկերության առաքելությունն ու նպատակները՝ ցանկալի է ավելացնել մշակութային հաղորդումների քանակը և եթերային ժամերը: Ըստ էության, մշակութային հաղորդումները որոշ առումներով նույնպես կարող են դասվել ժամանցային հաղորդումների շարքին, սակայն մշակութային հաղորդումներն ունեն նպատակային բնույթ և այդ պատճառով էլ առանձնացված են ժամանցային հաղորդումներից. դրանք կատարում են ոչ միայն ժամանցի ապահովման, այլև կրթող, ուսուցանող և զարգացնող գործառույթ: Այս տեսանկյունից, առավել նպատակահարմար է կրճատել ժամանցային հաղորդումների եթերաժամն ու ավելացնել մշակութային հաղորդումների քանակը:
- Հանրությանը հուզող խնդիրների լուսաբանմանն ուղղված հաղորդումները զբաղեցնում են եթերաժամի 6.9%-ը: Այս հաղորդումների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ այս հաղորդումները կատարում են

խնդիրների բարձրաձայնման, քննարկման գործառույթ: Հաղորդումների արդյունավետությունն ու օգտակարությունը կբարձրանա, եթե դրանք ունենան խնդիրը կարգավորող, լուծումներ առաջարկող գործառույթ: Այսինքն, դրանք առավել օգտակար կլինեն հանրությանը, եթե հաղորդումների ընթացքում ոչ միայն ներկայացվեն խնդիրներ, այլև տրվեն դրանց լուծումները:

- Առաջին ալիքի հաղորդումների շրջանակներում բարձրաձայնված հանրային խնդիրները և փորձագետների հետ հարցազրույցների ընթացքում դուրս բերված խնդիրները որոշ դեպքերում տարբեր են: Այս տեսանկյունից եթերում ցուցադրվող հաղորդումների արդյունավետությունն առավել բարձրացնելու համար նպատակահարմար է հաղորդումների բովանդակությունը որոշելիս հաշվի առնել նաև 2017թ. «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն»-ի կողմից իրականացված «Հանրային առաջնային խնդիրների և դրանց լուծման հնարավոր ուղիների դուրսբերում փորձագիտական հարցազրույցների միջոցով. վերջիններիս բարձրաձայնումը/ներկայացվածությունը Առաջին ալիքով» հետազոտության արդյունքները:
- Հանրային հեռուստառադիոընկերության մասին օրենքում նշված է, որ հասարակական առավել հնչեղություն ունեցող տեղեկատվության հեռարձակման համար հարկավոր է օգտագործել ամենահարմար եթերային ժամանակը: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ առավել հարմար ժամանակ համարվում է 18:00-00:00 ընկած ժամանակահատվածը (մասնավորապես 18:00-21:00), քանի որ հասարակության մեծ մասն այս ժամին է դիտում Առաջին ալիքը: Բովանդակային վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ այս ժամերին Առաջին ալիքի եթերացանկում կարող ենք գտել և՛ տեղեկատվական, և՛ հանրային խնդիրներ բարձրաձայնող, և՛ ժամանցային հաղորդումներ: Թվարկված հաղորդումներից ամենաշատ եթերային ժամ հատկացված է ժամանցային հաղորդումներին: Այս տեսանկյունից նպատակահարմար է վերանայել Առաջին ալիքի հաղորդումների հեռարձակման ժամերը՝ ելնելով հաղորդման կարևորությունից, հանրային

օգտակարությունից, ինչպես նաև թիրախային խմբի յուրահաստկություններից, որին ուղղված է տվյալ հաղորդումը:

- Առաջին ակիբի եթերացանկում չկա հաղորդումներ ուղղված ազգային փոքրամասնություններին, իսկ հասարակության տարբեր շերտերի/խմբերի շահերի մասին խոսվում է որևէ հաղորդման շրջանակներում՝ կարճ ակնարկի տեսքով, սակայն առանձին հաղորդում, որը նվիրված է շերտերի/խմբերի շահերի բարձրաձայնմանը չկա:
- Հանրային հեռուստառադիոընկերության մասին օրենքի համաձայն Հանրային հեռուստաընկերությունը պետք է ապահովի խուլուհամր հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիությունը, ինչը ենթադրում է հատուկ մասնագետների ներգրավում և տեխնիկաների կիրառում: Այս տեսանկյունից Առաջին ակիբն՝ իբրև հանրային հեռուստաակիբ ունի որոշ բացթողումներ, քանի որ չի ապահովում խուլուհամր հանրության համար տեղեկատվության ստացման պայմաններ: Այս պայմանների ապահովման պարագայում հնարավոր կլինի ընդլայնել թիրախային լսարանը և իրականացնել հատուկ կարիքներ ունեցող մարդկանց տեղեկատվության տրամադրման գործառույթ: